ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայտարարվում է մրցույթ «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Ճամբարակի Մ.Քոչարյանի անվան N2 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության<< Հայոց լեզու>> / 5դասաժամ/
<<Մաթեմատիկա>>/5դասաժամ,<<Հայրենագիտություն>>/2դասաժամ/,
<<Համաշխարհային պատմություն>>/3դասաժամ/ ուսուցիչների թափուր տեղերի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի:
Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի:
Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և հարցազրույցն անցկացնում մասնակիցներիի հետ:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

1. դիմում՝ (Ձև 1),
2. մեկ լուսանկար 3x4 չափի,
2. բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),
3. անձը հաստատող փաստաթուղթ,
4.«Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը՝ առկայության դեպքում,
5. ինքնակենսագրություն (Ձև 5),
6. այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ
7. ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,
8. հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
9. որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը ներկայացված փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում :

Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ, կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից մինչև 2022 թվականի **սեպտեմբերի 13-ը** ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ն, բացի շաբաթ և կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

<< Հայոց լեզու>> առարկայի մրցույթը տեղի կունենան **սեպտեմբերի 20-ին ,ժամը 10-00-ին, ՀՀ Գեղարքունիքի մարզ, ք. Ճամբարակ, Մ.Քոչարյանի անվան N 2 հիմնական դպրոցում ,<< Մաթեմատիկա >> առարկայի մրցույթը սեպտեմբերի 20-ին,** ժամը 12:00-ին,<<Հայրենագիտություն>> առարկայի մրցույթը սեպտեմբերի 20-ին ,ժամը 14-00-ին,<< Համաշխարհային պատմություն>> առարկայի մրցույթը

սեպտեմբերի 20-ին ,ժամը 16-00-ին ՀՀ Գեղարքունիքի մարզի Ճամբարակի Մ.Քոչարյանի անվանN2 հ/դ-ում:

Տեղեկությունների համար զանգահարել՝ 091-60-38-87 հեռախոսահամարով